



**Կարգապահական գործ թիվ 18106**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2019թ-ի փետրվարի 06-ի թիվ 2-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/02-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ԼԻԱՆԱ ՍԱՄՎԵԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՅԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), նիստը նախագահող՝ Տիգրան Խուրշուդյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Հրանտ Անանյանի, Սիմոն Բաբայանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի կազմով, քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, քննության առնելով փաստաբան Լիանա Սամվելի Գրիգորյանին (արտոնագիր՝ թիվ 2377), (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

**Պ Ա Ր Զ Ե Ց՝**

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

03.05.2018թ. Պալատ է մուտքագրվել (**մուտք՝ N 1289-18**) Միեր Բադայանի (**այսուհետ նաև՝ Դիմող**) դիմումը, որով վերջինս հայտնել է, որ իր վստահորդ Անժելա Խաչատրյանը 2011թ. դիմել է իրեն՝ փաստաբանական ծառայություն մատուցելու համար, որի շրջանակում 2011-2015թթ. ինքը դիմել է իրավապահ մարմիններին և դատարան: Նշված ժամանակահատվածում Անժելա Խաչատրյանն իրենից բազմիցս դժգոհություններ է հայտնել, ցանկացել է հրաժարվել ծառայություններից, սակայն գրավոր դիմում չի ներկայացրել:

Դիմողը նաև հայտնել է, որ 15.04.2015թ. թիվ ՍԴ2/0127/02/13 քաղաքացիական գործով, երբ դատարանը հոգուտ Անժելա Խաչատրյանի վճիռ է կայացրել, վերջինս եկել է իր գրասենյակ և ներողություն խնդրել, նաև հայտնել է, որ իր վերաբերյալ Պալատ բողոք է ուղարկել փաստաբան Լիանա Սամվելի Գրիգորյանի խորհրդով: Սակայն ինքն այդ ժամանակ ուշադրություն չի դարձրել և չի վստահել Անժելա Խաչատրյանի խոսքերին:

Միեր Բաղայանը նաև նշել է, որ Անժելա Խաչատրյանի շահերը քրեական գործով նախաքննության ընթացքում իր կողմից ներկայացնելուց հետո՝ սկսված 2013 թվականից, որպես հանրային պաշտպան ներկայացրել է Լիանա Գրիգորյանը: Ըստ Դիմողի՝ հետագայում Անժելա Խաչատրյանն իրեն հայտնել է, որ իրենից հրաժարվել է քննիչ Կարեն Ալավերդյանի պահանջով, որը նաև պահանջել է, որպեսզի դիմի հանրային պաշտպան Լիանա Սամվելի Գրիգորյանին:

Փաստաբան Միեր Բաղայանը նաև հայտնել է, որ հանրային պաշտպան Լիանա Սամվելի Գրիգորյանին դիմել է քաղաքացի Նադյա Սահակյանը, որպեսզի ընդդեմ իր վստահորդի՝ Նարինե Մարգարյանի, դիմի դատարան՝ բնակարանի գնելու գումարը հետ վերադարձնելու համար: Հետագայում, Լիանա Սամվելի Գրիգորյանի խորհրդով և անմիջական կազմակերպմամբ, Նադյա Սահակյանի կողմից ստորագրված դիմումը հանձնվել է Լիանա Սամվելի Գրիգորյանին, որը, վերջինս 2017թ. փետրվար ամսին հանձնել է Սյունիքի մարզի դատախազին: Այդ դիմումի հիմքով հարուցվել է քրեական գործ:

Միեր Բաղայանը նաև նշել է, որ ներկայումս Անժելա Խաչատրյանի շահերը ներկայացնում է մեկ այլ քաղաքացիական գործով, որի առիթով իրեն այցելության ժամանակ փորձել է ճշտել նախկինում Լիանա Սամվելի Գրիգորյանի վերաբերյալ հայտնած տեղեկությունները: Այդ կապակցությամբ Անժելա Խաչատրյանը բանավոր և գրավոր հայտնել է, որ Լիանա Սամվելի Գրիգորյանը, որպես հանրային պաշտպան, քրեական գործով իրեն ծառայություններ մատուցելուց հետո պահանջել է 100.000 ՀՀ դրամ, որից 50.000 ՀՀ դրամ գումարը պետք է փոխանցեր քննիչ Կարեն Ալավերդյանին: Անժելա Խաչատրյանը նաև հայտնել է, որ Լիանա Գրիգորյանն իրեն հորդորել է Միեր Բաղայանի դեմ Պալատ բողոք ներկայացնել, ինչպես նաև հայտնել է, որ քննիչ Կարեն Ալավերդյանը և Լիանա Սամվելի Գրիգորյանը գտնվում են մտերմիկ հարաբերությունների մեջ:

Վերոգրյալի կապակցությամբ փաստաբան Միեր Բաղայանը խնդրել է փաստաբան, հանրային պաշտպան Լիանա Սամվելի Գրիգորյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ, իսկ դիմումին կից ներկայացրել է Անժելա Խաչատրյանի անունից 08.04.2018թ. ստորագրված հայտարարության պատճենը:

## **2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.**

ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 01.06.2018թ. թիվ 232-Ա/ԿԳ-18106 որոշմամբ փաստաբան Լիանա Սամվելի Գրիգորյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագրքի**) 2.2.2 և 2.2.3 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

05.06.2018թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ՝ Նարինե Սարգսյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

## **3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.**

### **3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.**

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել: Խորհրդի նիստին Դիմողը չի ներկայացել, թեև պատշաճ ծանուցված է եղել նիստի օրվա, վայրի և ժամի մասին:

### **3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.**

17.05.2018 թվականին Պալատ մուտք է եղել փաստաբան Լիանա Սամվելի Գրիգորյանի բացատրությունը, որով վերջինս հայտնել է, որ Միեր Բադալյանի և Անժելա Խաչատրյանի գործողություններն ամբողջությամբ համապատասխանում են զրպարտության հատկանիշներին, որի հետ կապված պատրաստվում է քաղաքացիաիրավական կարգով դիմել դատարան:

Պալատ մուտքագրած գրավոր Բացատրությամբ Պատասխանողը նշել է, որ իր վստահորդ Անժելա Խաչատրյանին որևէ բողոք ներկայացնելու խորհուրդ չի տվել: 2013թ. քննված քրեական գործով ներգրավվել է սահմանված կարգով, այն է վարույթն իրականացնող մամնի որոշումը Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից իրեն մակագրվելուց հետո, և այդ գործընթացի վրա որևէ կերպ ազդելու հնարավորություն բնականաբար չի ունեցել: Նախքան այդ գործով որպես պաշտպան մասնակցելը Անժելա Խաչատրյանին չի ճանաչել և նրա հետ ընդհանրապես որևէ փոխհարաբերություն չի ունեցել:

Պատասխանողը նաև նշել է, որ 2017թ. իր նախկին վստահորդ Նադյա Ասհակյանը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել սեփական նախաձեռնությամբ և ինքն այդ մասին տեղեկացել է միայն ամիսներ անց՝ հարցաքննության կանչվելու ժամանակ, այդ գործով անցել է որպես վկա և մասնագիտական առումով որևէ առնչություն չի ունեցել:

Պատասխանողը հայտնել է նաև, որ Անժելա Խաչատրյանի հետ ոչ մի գումարային հարցի շուրջ երբևէ որևէ խոսակցություն չի եղել, նրան պարզաբանված է եղել հանրային պաշտպանի ծառայությունների անվճար լինելու հանգամանքը:

13.07.2018 թվականին Պատասխանողը Նախապատրաստողին է ներկայացրել բացատրություն, որով ըստ էության հաստատել է նախկին բացատրությամբ նշված հանգամանքները:

21.01.2019 թվականին Պատասխանողը ներկայացրել է առարկություն Նախապատրաստողի կողմից ներկայացված եզրակացության վերաբերյալ, վերջինս առարկություն է ներկայացրել Նախապատրաստողի եզրակացության մեջ տեղ գտած փաստերի և ապացույցների վերաբերյալ և նշել, որ համաձայն չէ Նախապատրաստողի եզրակացության հետ, հետևյալ հիմնավորմամբ. Եզրակացությամբ հաստատվել է իր արարքում «վստահորդ Անժելա Խաչատրյանին փաստաբան Միեր Բադալյանի նկատմամբ բողոք ներկայացնելու հարցում հորդորելու և չեզոք դիրք չգրավելու» ձևով կատարված կարգապահական խախտման հատկանիշների առկայությունը այն դեպքում, երբ արդեն իսկ առկա է միևնույն արարքի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասին որոշում:

Խորհրդի նիստին ներկայացել է Պատասխանողի ներկայացուցիչ Սուզաննա

Խչեյանը: Վերջինս պնդել է Պատասխանողի կողմից ներկայացված դիրքորոշումը (առարկությունը), որը վերաբերել է նախապատրաստողի կողմից ներկայացված եզրակացությանը: Վերջինս նշել է նաև, որ Միեր Բաղայանը նմանատիպ դիմում ներկայացնելով խախտել է փաստաբանի վարքագծի կանոնագրքի 5.1.1 և 5.2.2 կանոններն, իսկ ինչ վարաբերում է մնացած հանգամանքներին, ապա իր կողմից ներկայացված դիմումներով և կից ներկայացրած փաստաթղթերով, որևէ կերպ չի հաստատվում իր կողմից մատնանշած փաստերը:

Սուզաննա Խչեյանը նշել է նաև, որ Լիաննա Գրիգորյանը հանրային պաշտպան է նշանակվել հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի համապատասխան որոշմամբ, ուստի Լիաննա Գրիգորյանի փոխարեն կարող էր լինել ցանկացած հանրային պաշտպան տվյալ պարագայում, իսկ ինչ վերաբերում է Անժելա Խաչատրյանի դիմումում նշված հանգամանքին, ապա վերջինս է 31.01.2014 դիմում գրել քննիչին՝ խնդրելով իրեն տրամադրել փաստաբան և իր դիրքորոշումն է հայտնել Միեր Բաղայանի վերաբերյալ:

### **3.3. Վկաների ցուցմունքները.**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

### **4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.**

Սույն կարգապահական գործը Նախապատրաստողը 05.08.2018թ. կազմել է եզրակացություն:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 07.08.2018թ:

Խորհրդի նիստերը նշանակվել են 11.10.2018թ. ժամը՝ 18:30-ին, 08.11.2018թ. ժամը՝ 18:30-ին, 12.12.2018թ. ժամը՝ 18:30-ին և 23.01.2019թ. ժամը՝ 19:00-ին: Խորհրդի նիստը տեղի է ունեցել 06.02.2019թ. ժամը՝ 18:45-ին, ՀՀ փաստաբանների Պալատի վարչական շենքում՝ ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակում:

### **5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.**

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի (**այսուհետ նաև՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *Խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:*

**Խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

- Միեր Բաղայանը ներկայացրել է Անժելա Խաչատրյանի շահերը 2011-2015 թվականների ընթացքում:
- Թիվ 4111913 քրեական գործով Անժելա Խաչատրյանը ցանկություն է հայտնել հանրային պաշտպանի միջոցով անվճար իրավաբանական օգնություն ստանալ և հրաժարվել է փաստաբան Միեր Բաղայանի ծառայությունից:

- Քննիչ Կ.Ա. Ալավերդյանը 31.01.2014 թվականին որոշում է կայացրել հանրային պաշտպան հրավիրելու մասին:

*Նշված փաստերը հաստատվում է գործում առկա ապացույցներով՝ այդ թվում Դիմումով, Պատասխանողի բացատրությամբ և 31.01.2014թ. հանրային պաշտպան հրավիրելու մասին որոշմամբ:*

## **6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.**

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Լիանա Սամվելի Գրիգորյանը փաստաբանական գործունեության արտոնագիրն ստացել է 08.02.2018թ., և 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում, վերջինիս նկատմամբ հարուցվել է մեկ կարգապահական վարույթ (մեկ ավարտված վարույթ), որը Խորհրդի 15.12.2015թ. թիվ ԿԳ/212-Ա որոշմամբ կարճվել է:

## **7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.**

**Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Լիանա Գրիգորյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.**

**Կանոնագրի 2.2.2 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կարող են կասկածի տակ դնել նրա հեղինակությունը, ազնվությունը և անձեռնմխելիությունը (հակառակորդ կողմի առաջարկների հանդեպ մարչելիություն):**

**Կանոնագրի 2.2.3 ենթակետի համաձայն՝ մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառներում իր գործունեությամբ փաստաբանը պետք է նպաստի փաստաբանի մասնագիտության բովանդակության և հասարակական կոչման նկատմամբ հարգանքի ձևավորմանն ու ամրապնդմանը:**

Կարգի 15-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը:

Կարգի 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կարգապահական խախտման փաստը ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել Օրենքի և սույն կարգի դրույթներին համապատասխան պարզաճ իրավական ընթացակարգի շրջանակում, մեկնաբանվում են հոգուր Պատասխանողի:

Ղեկավարվելով վերոգրյալ իրավական նորմերով և հիմք ընդունելով սույն կարգապահական գործում առկա փաստական տվյալները՝ Խորհուրդը հարկ է համարում արձանագրել, որ Դիմողի կողմից չեն ներկայացվել փաստաբան՝ Լիանա Սամվելի Գրիգորյանի վարքագծին վերագրվող՝ Դիմումով վկայակոչված արարքները հիմնավորող ապացույցներ: Մասնավորապես, Դիմողի կողմից սույն կարգապահական գործի շրջանակներում չի հիմնավորվել հանրային պաշտպան Լիանա Սամվելի Գրիգորյանի կողմից իր վստահողը Անժելա Խաչատրյանից գումար ստանալու հանգամանքը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.8 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանների պալատի խորհուրդը կարծում է փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթն այն

դեպքում, երբ հիմնավորված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Դիմողի կողմից սույն կարգապահական վարույթի ընթացքում չհիմնավորվեցին իր կողմից վկայակոչած հանգամանքներն, ուստի Խորհուրդը գտնում է, որ չի հիմնավորվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը, հետևաբար, սույն կարգապահական վարույթն ենթակա է կարճման:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով՝ Խորհուրդը

### **Ո Ր Ո Շ Ե Ց՝**

**1. Փաստաբան Լիանա Սամվելի Գրիգորյանի (արտոնագիր թիվ 2377) նկատմամբ Կանոնագրքի 2.2.2 և 2.2.3 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-18106 կարգապահական վարույթը կարճել:**

**2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:**

**Ծանոթություն.** Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի  
կարգապահական գործով  
նիստը նախագահող՝

Տիգրան Խուրշուդյան

**06 փետրվարի 2019թ.  
թիվ ԿԳ/02-Ա  
ք. Երևան**